ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 23.01.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2019/209

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի

Մասնակցությամբ՝ «ԱՐ-ՄՈԲԻԼ» ՓԲԸ-ի ներկայացուցիչներ՝

Հ. Ենգոյանի (լիազորագիր տրված՝ 09.01.2020թ.)

Հ. Աբրահամյանի (լիազորագիր տրված՝ 09.01.2020թ.)

Սոցիալական ապահովության ծառայության ներկայացուցիչ՝

Գ. Ջանջուղազյանի (լիազորագիր տրված՝ 23.01.2020թ.)

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 26.12.2019թ. թիվ 26/26-1/21514-2019 գրությամբ «ԱՐ-ՄՈԲԻԼ» ՓԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Սոցիալական ապահովության ծառայության 24.12.2019թ. թիվ 02/14-5/30090-2019 գրության հիման վրա, 26.12.2019թ. թիվ 26/26-1/21514-2019 գրությամբ նախաձեռնել է «ԱՐ-ՄՈԲԻԼ» ՓԲԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «ԱՐ-ՄՈԲԻԼ» ՓԲԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«ԱՐ-ՄՈԲԻԼ» ՓԲԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

Սոցիալական ապահովության ծառայության կարիքների համար հայտարարվել է «ՍԱԾ-ԳՀԾՁԲ-20/11» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ): Ընթացակարգին, ի թիվս այլ մասնակիցների, էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով 05.12.2019թ. հայտ է ներկայացրել նաև «ԱՐ-ՄՈԲԻԼ» ՓԲԸ-ն: Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 12.12.2019թ. տեղի ունեցած հայտերի բացման նիստի թիվ 2 արձանագրության 2 կետի համաձայն՝ «ԱՐ-ՄՈԲԻԼ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերի՝ մասնավորապես Ընկերության կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը էլեկտրոնային ստորագրությամբ տնօրենի փոխարեն ստորագրել է Մելքոնյան Գայանեն, սակայն համակարգում հայտով ներկայացված չէ հայտի փաստաթղթերը ստորագրելու և armeps համակարգով ներկայացնելու լիազորությունը հավաստող փաստաթուղթը, ինչը չի համապատասխանում հրավերի 2-րդ մասի 2.6 կետով սահմանված պահանջներին:

Իսկ արդեն նույն արձանագրության 3 կետով՝ հանձնաժողովը որոշեց կասեցնել նիստը մեկ աշխատանքային օրով և գնանշման հարցման հրավերի 8.9 կետով սահմանված պահանջների համաձայն համակարգի միջոցով տեղեկացնել «ԱՐ-ՄՈԲԻԼ» ՓԲԸ-ին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Այնուհետև Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 16.12.2019թ. տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության 1 կետի համաձայն՝ «ԱՐ-ՄՈԲԻԼ» ՓԲԸ-ն հանձնաժողովին չի ներկայացրել հայտով ներկայացրած փաստաթղթի շտկված տարբերակը՝ մասնակցի կողմից հայտով ներկայացվող փաստաթղթերը ստորագրելու և armeps համակարգով ներկայացնելու լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթը և արդեն համաձայն նույն արձանագրության 2-րդ կետի՝ որոշեց հայտը գնահատել անբավարար և մերժել:

Ընկերությունը վկայակոչել է հետևյալ իրավական հիմքերը և հիմնավորումները.

ՀՀ Սահմանադրության 86-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում պետության քաղաքականության հիմնական նպատակներն են գործարար միջավայրի բարելավումը և ձեռնարկատիրության խթանումը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայություն¬ների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Ինչպես արդեն հայտնել ենք՝ «ԱՐ-ՄՈԲԻԼ» ՓԲԸ-ն 05.12.2019թ. էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով հայտ է ներկայացրել Սոցիալական ապահովության

ծառայության կարիքների համար հայտարարված «ՍԱԾ-ԳՀԾՁԲ-20/11» ծածկագրով գնանշման հարցման Ընթացակարգին, սակայն գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվել է անհամապատասխանություն, մասնավորապես՝ «ԱՐ-ՄՈԲԻԼ» ՓԲԸ-ի կողմից էլեկտրոնային ստորագրությամբ ներկայացված փաստաթղթերը տնօրենի փոխարեն ստորագրել է Մելքոնյան Գայանեն, սակայն համակարգում հայտով ներկայացված չէ հայտի փաստաթղթերը ստորագրելու և armeps համակարգով ներկայացնելու լիազորությունը հավաստող փաստաթուղթը:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ գնահատող հանձնաժողովը որոշել է 12.12.2019թ. համակարգի միջոցով տեղեկացնել «ԱՐ-ՄՈԲԻԼ» ՓԲԸ-ին՝ առաջարկելով օրենքով սահմանված ժամկետում շտկել անհամապատասխանությունը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին տեղեկացնում ենք, որ «ԱՐ-ՄՈԲԻԼ» ՓԲԸ-ն (law@armobil.am) 12.12.2019թ. armeps համացանցային կայքի միջոցով որևէ տեսակի և բովանդակության ոչ ավտոմատ եղանակով ծանուցում չի ստացել:

«ԱՐ-ՄՈԲԻԼ» ՓԲԸ-ն (law@armobil.am) 12.12.2019թ. armeps համացանցային կայքի միջոցով որևէ տեսակի և բովանդակության ոչ ավտոմատ եղանակով ծանուցում չստանալով և կասկածելով, որ նման ծանուցում առկա է եղել, 10.01.2019թ. համապատասխան հարցում է ներկայացրել ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ խնդրելով պարզաբանել, թե արդյոք տվյալ ընթացակարգի շրջանակներում գնահատող հանձնաժողովը 12.12.2019թ. www.armeps.am համացանցային կայքի միջոցով ոչ ավտոմատ ծանուցում է ուղարկել Ընկերությանը /հարցման պատճեն կցվում է/:

Այնուհետև ՀՀ ֆինանսների նախարարությունից ստանալով պատասխան, որ «ՍԱԾ ԳՀԾՁԲ-20/11» ծածկագրով ընթացակարգի շրջանակում գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից «Ար-Մոբիլ» ՓԲԸ-ի՝ «Armeps» համակարգում գրանցած law@armobil.am էլեկտրոնային փոստի հասցեով ոչ ավտոմատ ծանուցման եղանակով 12/12/2019թ. ժամը 17:31-ին ուղարկվել է էլեկտրոնային ուղերձ նամակ /գրության պատճեն կցվում է/, Ընկերությունը փորձել է պարզել, թե այդ դեպքում նման ուղերց նամակը ինչու մուտք չի եղել Ընկերության էլեկտրոնային փոստ:

Վերը նշվածի արդյունքում «ԱՐ-ՄՈԲԻԼ» ՓԲԸ-ն հարցում է ներկայացրել իր ծրագրային սերվերը սպասարկող «Մաքսիմիլիան Գրուպ» ՍՊԸ-ին /պայմանագիր թիվ ARMOBIL-04-19/,

որի վերաբերյալ «Մաքսիմիլիան Գրուպ» ՍՊԸ-ն 22.01.2020թ. ներկայացրել է տեղեկանք, որում նշվել է հետևյալը.

«Սույն տեղեկանքը տրվում է առ այն, որ կողմերիս «ԱՐ-ՄՈԲԻԼ» ՓԲԸ-ի և «Մաքսիմիլիան Գրուպ» ՍՊԸ-ի միջև կնքված է ծառայությունների վճարովի մատուցման N ARMOBIL-04-19 պայմանագրը:

Պայմանագրով սահմանված ծառայությունների մատուցման շրջանակներում 2019 թվականի դեկտեմբերի 12-ին ժամը 10:00-ից մինչև 12:10-ն ընկած ժամանակահատվածում «Մաքսիմիլիան Գրուպ» ՍՊԸ-ի կողմից կատարվել են սերվերում ծրագրային ապահովման թարմացումներ, որի հետևանքով 2 ժամ և 10 րոպե տևողությամբ անջատված է եղել սերվերը, այնուհետև ի հայտ են եկել ծրագրային անհամապատասխանություն, որի հետևանքով կրկին նույն օրը ժամը 15:15-ից մինչև 19:50 անջատված է եղել, վերջնական շտկման համար: Խնդիրը լուծվել է ժամը 19:50 և միացվել է սերվերը: Կցանկանանք տեղեկացնել որ սերվերի աշխատունակությունը 96% (uptime):

Արդյունքում վերոնշված ժամանակահատվածում «ԱՐ-ՄՈԲԻԼ» ՓԲԸ-ի law@armobil.am և info@armobil.am էլեկտրոնային հասցեներին(ից) մուտքեր/ելքեր չեն կատարվել:

Աշխատանքների կատարումից հետո էլ վերոնշված ժամանակահատվածում, նշված էլեկտրոնային հասցեներին ուղարկված և ստացված նամակները չեն հասել հասցեատերերին»:

Վերոհիշյալ գրությունը և կողմերի միջև կնքված պայմանագիրը հավաստում է, որ «Մաքսիմիլիան Գրուպ» ՍՊԸ-ն իրականացնում է www.armobil.am սերվերի հոսթինգ ծառայություն, նշված սերվերի վրա են տեղադրված Ընկերության բոլոր մեյլերը, այդ թվում նաև law@armobil.am և info@armobil.am էլեկտրոնային փոստերը, և փաստացիորեն «Մաքսիմիլիան Գրուպ» ՍՊԸ-ի կողմից նշված ժամանակահատվածում ն սերվերում ծրագրային ապահովման թարմացումներ կատարելու արդյունքում սերվերը անջատված է եղել, որի արդյունքում «ԱՐ-ՄՈԲԻԼ» ՓԲԸ-ի law@armobil.am և info@armobil.am էլեկտրոնային հասցեներին(ից) մուտքեր/ելքեր չեն կատարվել:

Հարգելի Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ, «ԱՐ-ՄՈԲԻԼ» ՓԲԸ-ի կողմից գնման գործընթացի շրջանակներում ստանձնած պարտավորության խախտում թույլ տալու փաստը քննելիս՝ խնդրում ենք նկատի ունենալ, որ ՓԲԸ-ն խախտում իրականում թույլ չի

տվել, և լիազորիգիրը չուղարկելը պայմանավորված է եղել բացառապես շտկման ծանուցում չստանալով:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրում ենք նկատի ունենալ նաև մեկ այլ հանգամանք. «Ար-Մոբիլ» ՓԲԸ-ն նույն տարեթվին մասնակցել է Սոցիալական ապահովության ծառայության կողմից կազմակերպված մեկ այլ ընթացակարգին՝ ՍԱԾ ԳՀԾՁԲ-20/3 ծածկագրով ընթացակարգին, որի հայտերի բացումը եղել է դեռևս 2019թ. նոյեմբերի 8-ին և որի հանձնաժողովի քարտուղարը եղել է նույն անձը: Նշված ընթացակարգին մասնակցելու ընթացքում սահմանված կարգով «Ար-Մոբիլ» ՓԲԸ-ն ներկայացրել է բոլոր փաստաթղթերը, այդ թվում և վերոնշված աշխատակցի լիազորագիրը /համապատասխան ապացույցները կցվում են/: Ընդ որում, լիազորագիրը տրված է եղել ընդհանրական բնույթի, որով հայտը ստորագրած նույն անձին՝ Գայանե Մելքոնյանին տրվել է իրավունք «Ար-Մոբիլ» ՓԲԸ-ի անունից էլեկտրոնային կարգով ստորագրել բոլոր փաստաթղթերը: Այլ կերպ ասած Պատվիրատուն իր փաստաթղթաշրջանառության մեջ արդեն իսկ ունեցել է սույն ընթացակարգում պակասող փաստաթուղթը, և նման ընդհանրական բնույթի լիազորագիրը կարող էր ծառայել նաև այս Ընթացակարգի համար:

Միևնույն ժամանակ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրում ենք ուշադրություն դարձնել մեկ այլ կարևոր հանգամանքի վրա, այն է.

Թիվ ՍՑ-ՆԳ-2019/209 ընթացակարգը նախաձեռնվել է 27.12.2019թ.՝ հիմքում դնելով ՀՀ սոցիալական ապահովության ծառայության կողմից ՀՀ ֆինանսների նախարարությանը 24.12.2019թ. ուղղված թիվ 02/14-5/30090-2019 գրությունը:

16.12.2019թ. գնահատող հանձնաժողովը մերժելով «ԱՐ-ՄՈԲԻԼ» ՓԲԸ-ի հայտը՝ ՀՀ սոցիալական ապահովության ծառայության կողմից հիմքերը ներկայացվել է ՀՀ ֆինանսների նախարարությանը միայն 24.12.2019թ.՝ դրանով էլ խախտելով Կարգի 45-րդ կետի պահանջները:

Այլ կերպ ասած, Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքը ի հայտ է եկել 16.12.2019թ., սակայն հիմքերը լիազորված մարմնին չեն ներկայացվել 5 աշխատանքային օրվա ընթացքում:

Վերոհիշյալը հանգեցրել է մասնակցին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու նպատակով ընթացակարգ նախաձեռնելու համար սահմանված ժամկետների խախտմանը:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:
Հետևաբար՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, լիազորված մարմնին ուղարկելը Պատվիրատուի պարտականությունն է, այն իմպերատիվ (պարտադիր) դրույթ է, որի պահպանմամբ է միայն հնարավոր փաստել իրավահարաբերության առաջացումը:

Հակառակ դեպքում Կարգի 45-րդ կետով սահմանված դրույթները չեն ծառայի իրենց նպատակին, այլակերպ մեկնաբանման դեպքում կհանգեցնեն որևէ ողջամիտ իրավական փաստարկով չհիմնավորվող մեկնաբանության՝ հաշվի չառնելով այն ընդունող մարմնի նպատակը, նորմում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունը օրենքներով (տե՛ս, «ՎՏԲ–Հայաստան բանկ» ՓԲԸ-ն ընդդեմ Էդիկ Հակոբյանի թիվ ԷԴ/0509/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դաւրարանի 12.07.2018 թվականի որոշումը):

Հատկանշական է նաև այն փաստը, որ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից վերը նշված փաստի առթիվ արդեն իսկ քննվել է նույնաբովանդակ ընթացակարգեր /ՍՑ-ԼՕ-2019/233 և ՍՑ-ՆԳ-2019/195/, որի վերաբերյալ կայացրած որոշմամբ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը մասնավորապես թիվ ՍՑ-ԼՕ-2019/233 ծածկագրով ընթացակարգի որոշմամբ արձանագրել է հետևյալը.

«Ամբողջացնելով վերը թվարկված իրավական նորմերը, դրանց համադրման արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, լիազորված մարմնին ուղարկելը Պատվիրատուի պարտականությունն է, այն իմպերատիվ (պարտադիր) դրույթ է, որի պահպանմամբ է միայն հնարավոր փաստել իրավահարաբերության առաջացումը: Հակառակ դեպքում Կարգի 45-րդ կետով սահմանված դրույթները չեն ծառայի իրենց նպատակին, այլակերպ մեկնաբանման դեպքում կհանգցնեն որևէ ողջամիտ իրավական փաստարկով չհիմնավորվող մեկնաբանության՝ հաշվի չառնելով այն ընդունող մարմնի նպատակը, նորմում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանա¬կությունը: ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախկինում կայացված որոշումներից մեկով կարևորել է, որ Հայաստանի Հանրապետության՝ որպես իրավական պետության կարևորագույն հատկանիշ է այն, որ սահմանադրական մակարդակով պետությունը հավաստում է իր հավատարմությունն այդ տեսությանը, ճանաչում և ամրագրում է իր կախվածությունն իրավունքից, իրավունքի գերակայությունը՝ պետական իշխանության նկատմամբ: Իրավական պետության և իրավունքի գերակայության սկզբունքը, ի թիվս այլոց, դրսևորվում է նրանում, որ Հայաստանի Հանրապետությունը որդեգրել է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների՝ որպես անմիջականորեն գործող իրավունք լինելու գաղափարը: Այն իր արտացոլումն է գտել նաև 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 5-րդ (Իրավական նորմերի աստիճանակարգությունը) և 6-րդ (Օրինականության սկզբունքը) հոդվածներում՝ մասնավորապես ամրագրելով, որ Սահմանադրությունն ունի բարձրագույն իրավաբանական ուժ, և որ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով (տե՛ս, «ՎՏԲ–Հայաստան բանկ» ՓԲԸ-ն ընդդեմ Էդիկ Հակոբյանի թիվ ԷԴ/0509/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դաւրարանի 12.07.2018 թվականի որոշումը): Ընդ որում, պետաիշխանական լիազորություններով օժտված ցանկացած մարմնին, իր գործառնական կարգավիճակին համապատասխան, օրենքով և նորմատիվ

իրավական ակտերով կարող են վերապահվել ինչպես պարտադիր, այնպես էլ հայեցողական լիազորություններ՝ պայմանավորված սահմանադրաիրավական այն հիմնադրույթի իրացման անհրաժեշտությամբ, ըստ որի՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով, չպետք է հակասեն և պետք է համապատասխանեն Սահմանադրությանը, օրենքներին կամ նորմատիվ իրավական ակտերին: Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ Պատվիրատուի կողմից չի պահպանվել Կարգի 45-րդ կետի դրույթներով սահմանված իմպերատիվ (պարտադիր) դրույթները, որպիսի պայմաններում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել Մասնակցին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն: Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը որոշել է ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 29.11.2019թ.–ի թիվ 26/26-1/19878-2019 գրությամբ «Պոժմաստեր» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2019/233 ծածկագրով ընթացակարգը մերժել»:

Ի մի բերելով վերը նշված փաստերն ու փաստական հանգամանքները՝ գտնում ենք, որ «ԱՐ-ՄՈԲԻԼ» ՓԲԸ-ի կողմից թույլ չի տրվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակներում ստանձնած պարտավորության որևէ խախտում, քանի որ ինչպես փաստում է «Մաքսիմիլիան Գրուպ» ՍՊԸ-ի կողմից տրված տեղեկանքը, նշված շտկման ծանուցումը law@armobil.am և info@armobil.am էլեկտրոնային հասցեներին չի ստացվել, իսկ պատվիարտուն ունեցել է ընդհանրական բնույթի և նաև տվյալ ընթացակարգի համար կիրառելի լիազորագիր: Բացի այդ, ելնելով Կարգի 45-րդ կետի պահանջից և հաշվի առնելով գնումների գործընթացի մասնակիցների՝ օրենսդրությամբ երաշխավորված իրավունքների և օրինական շահերի

պահպանման անհրաժեշտությունը, մասնակիցների՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը ներկայացնելու և դրանք ուսումնասիրելու համար օրենսդրորեն սահմանված սեղմ ժամկետների ինքնանպատակ չլինելը, գտնում ենք, որ առկա չեն «ԱՐ-ՄՈԲԻԼ» ՓԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը»:

Ելնելով վերոգրյալից՝ Ընկերությունը խնդրել է «ԱՐ-ՄՈԲԻԼ» ՓԲԸ-ին չվերագրել «Գնումների մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակներում ստանձնած պարտավորության խախտում, և վերջինիսի չներառել «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում»:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/209 ընթացակարգի շրջանակներում 23.01.2020թ. ժամը 10:50-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր հայտնել են վերը նշված գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. <u>Սոցիալական ապահովության ծառայության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

Սոցիալական ապահովության ծառայությունը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 24.12.2019թ. թիվ 02/14-5/30090-2019 գրությամբ հայտնել է, որ 2019 թվականի դեկտեմբերի 5-ին Սոցիալական ապահովության ծառայության կողմից ՍԱԾ ԳՀԾՁԲ-20/11 ծածկագրով հայտարարվել է Ծառայության կարիքների համար անվտանգության ապահովման ծառայությունների գնման ընթացակարգ:

Գնման ընթացակարգի շրջանակում հայտեր են ներկայացրել թվով վեց կազմակերպություն՝ այդ թվում «ԱՐ-ՄՈԲԻԼ» ՓԲԸ-ն: Հայտերի բացման նիստում գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվել է անհամապատասխանություն՝ Ընկերության կողմից հայտով ներկայացրած փաստաթղթերը էլեկտրոնային ստորագրությամբ տնօրենի փոխարեն ստորագրել է Մելքոնյան Գայանեն, սակայն համակարգում հայտով ներկայացված չէ հայտի փաստաթղթերը ստորագրելու և armeps

համակարգով ներկայացնելու լիազորությունը հավաստող փաստաթուղթը, ինչը չի համապատասխանում հրավերի 2-րդ մասի 2.6 կետով սահմանված պահանջներին:

Գնահատող հանձնաժողովի 2019թ. դեկտեմբերի 12-ի նիստի որոշմամբ հանձնաժողովի նիստը կասեցվել է և հրավերով սահմանված կարգով ժամանակ է տրվել անհամապատասխանությունը շտկելու համար, սակայն Ընկերությունը հայտի փաստաթղթերը ստորագրելու և armeps համակարգով ներկայացնելու լիազորությունը հավաստող փաստաթուղթը չի ներկայացրել հանձնաժողովին: Գնահատող հանձնաժողովի 2019թ. դեկտեմբերի 16-ի նիստի որոշմամբ մերժվել է «ԱՐ-ՄՈԲԻԼ» ՓԲԸ-ի հայտը հրավերով սահմանված պահանջներին չհամապատասխանելու հիմնավորմամբ:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/209 ընթացակարգի շրջանակներում 23.01.2020թ. ժամը 10:50-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2019/209 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

1. ՍՑ-ՆԳ-2019/209 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

2. Սոցիալական ապահովության ծառայության կողմից իր կարիքների համար հայտարարվել է «ՍԱԾ-ԳՀԾՁԲ-20/11» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «ԱՐ-ՄՈԲԻԼ» ՓԲԸ-ն:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 12.12.2019թ. նիստի թիվ 2 արձանագրությամբ արձանագրվել է, որ «ԱՐ-ՄՈԲԻԼ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերի՝ մասնավորապես Ընկերության կողմից հայտով ներկայացրած փաստաթղթերը էլեկտրոնային ստորագրությամբ տնօրենի փոխարեն ստորագրել է Մելքոնյան Գայանեն, սակայն համակարգում հայտով ներկայացված չէ հայտի փաստաթղթերը ստորագրելու և armeps համակարգով ներկայացնելու լիազորությունը հավաստող փաստաթուղթը, ինչը չի համապատասխանում հրավերի 2-րդ մասի 2.6 կետով սահմանված պահանջներին:

4. Նույն արձանագրությամբ կայացված որոշմամբ որոշվել է մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և առաջարկել Ընկերությանը սահմանված ժամկետում շտկել անհամապատասխանությունը:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 16.12.2019թ. նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ մերժել է Ընկերության հայտը, այն հիմնավորմամբ, որ հայտով ներկայացված չէ մասնակցի կողմից հայտով ներկայացվող փաստաթղթերը ստորագրելու և armeps համակարգով ներկայացնելու լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 26.12.2019թ. թիվ 26/26-1/21514-2019 գրությունը, Սոցիալական ապահովության ծառայության 24.12.2019թ. թիվ 02/14-5/30090-2019 գրությունը և կից փաստաթղթերը, Ընկերության կողմից Ընթացակարգի շրջանակներում ներկայացված դիրքորոշումը, գործով առկա նյութերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում՝ բացառությամբ մասնակցի կողմից գնային առաջարկի և հայտի ապահովման ներկայացման դեպքերի:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 41-րդ կետի համաձայն՝ եթե ***<u>հայտերի բացման նիստի</u> <u>ընթացքում</u>*** իրականացված գնահատման արդյունքում ***մասնակցի հայտում արձանագրվում են <u>անհամապատասխանություններ</u>՝ հրավերի պահանջների նկատմամբ***, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա ***հանձնաժողովը <u>մեկ աշխատանքային օրով</u> կասեցնում է նիստը***, իսկ հանձնաժողովի

քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ ***առաջարկելով*** մինչև կասեցման ժամկետի ավարտը ***<u>շտկել անհամապատասխանությունը</u>***:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով ***սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: <u>Հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:</u>***

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ***հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:***

Սոցիալական ապահովության ծառայության կողմից իր կարիքների համար հայտարարվել է «ՍԱԾ-ԳՀԾՁԲ-20/11» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը չի կարող նույն ընթացակարգին ներկայացնել մեկից ավելի հայտ: Մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը,

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ***<u>եթե հայտը ներկայացնում է գործակալը, ապա հայտով ներկայացվում է վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ:</u>***

Ընթացակարգի հրավերի 3-րդ կետի 3.3 ենթակետով սահմանվել է, որ սույն հրավերով նախատեսված՝ մասնակցի կազմված փաստաթղթերը ստորագրում է դրանք ներկայացնող անձը կամ վերջինիս լիազորված անձը (այսուհետ՝ գործակալ): Եթե հայտը ներկայացնում է

գործակալը, ապա հայտով ներկայացվում է վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ:

Այպիսով, համաձայն վկայակոչված նորմերի, հայտը ստորագրելու լիազրությունը հաստատող փաստաթուղթը՝ լիաորագիրը, Գնումների մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ի մասի իմաստով հանդիսանում է հայտում ներառվող փաստաթուղթ, որը ներկայացվում է հայտը ստորագրելու լիազրությունը հավաստելու համար:

Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «ԱՐ-ՄՈԲԻԼ» ՓԲԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 12.12.2019թ. նիստի թիվ 2 արձանագրությամբ արձանագրվել է, որ «ԱՐ-ՄՈԲԻԼ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերի՝ մասնավորապես Ընկերության կողմից հայտով ներկայացրած փաստաթղթերը էլեկտրոնային ստորագրությամբ տնօրենի փոխարեն ստորագրել է Մելքոնյան Գայանեն, սակայն համակարգում հայտով ներկայացված չէ հայտի փաստաթղթերը ստորագրելու և armeps համակարգով ներկայացնելու լիազորությունը հավաստող փաստաթուղթը, ինչը չի համապատասխանում հրավերի 2-րդ մասի 2.6 կետով սահմանված պահանջներին:

Նույն արձանագրությամբ կայացված որոշմամբ որոշվել է մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և առաջարկել Ընկերությանը սահմանված ժամկետում շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ Ընկերությունը 12.12.2019թ. ծանուցվել է արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում շտկելու անհրաժեշտության վերաբերյալ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 16.12.2019թ. նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ մերժել է Ընկերության հայտը, այն հիմնավորմամբ, որ հայտով ներկայացված չէ մասնակցի կողմից հայտով ներկայացվող փաստաթղթերը ստորագրելու և armeps համակարգով ներկայացնելու լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթը:

Այսպիսով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցը ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է գնման գործընթացի

շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ ***մասնակիցը*** կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը ***հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում սպանձնված պարտավորության խախտում:***

Այսպիսով՝ հաշվի առնելով վերոգրյալը գտնում եմ, որ «ԱՐ-ՄՈԲԻԼ» ՓԲԸ-ն Ընթացակարգի շրջանակներում թույլ է տվել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պարտավորության խախտում, և առկա են Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը, քանի որ Ընկերությունը Կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում որպես շտկում չի ներկայացրել Մելքոնյան Գայանեի կողմից հայտը ստորագրելու լիազորությունը հաստատող լիազորագիրը տրված «ԱՐ-ՄՈԲԻԼ» ՓԲԸ-ի տնօրենի կողմից:

Ինչ վերաբերվում է Ընկերության այն դիտարկմանը, որ Պատվիրատուն իր փաստաթղթաշրջանառության մեջ արդեն իսկ ունեցել է սույն ընթացակարգում պակասող փաստաթուղթը, և նման ընդհանրական բնույթի լիազորագիրը կարող էր ծառայել նաև այս Ընթացակարգի համար, ապա սույն մասով անհրաժեշտ եմ համարում արձանագրել այն փաստը, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 2-րդ մասը իմպերատիվ կերպով սահմանում է, որ ***եթե հայտը ներկայացնում է գործակալը, ապա <u>հայտով</u> ներկայացվում է վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ,*** ուստի գտնում եմ, որ Ընկերության նման դիտարկումն անհիմն է, քանի որ Օրենքի վերը նշված հոդվածի հստակ պահանջ է, որ լիազորագիրը պետք է ներկայացվի հայտով, որպիսի պահանջը չի պահպանվել Ընկերության կողմից:

Ինչ վերաբերվում է Ընկերության կողմից ներկայացված դիրքորոշմանը և Ընթացակարգի քննության շրջանակներում հնչեցված այն պնդումներին, որ Ընկերությունը չի ստացել

ծանուցում առկա անհամապատասխանությունը շտկելու համար, ապա սույն մասով արձանագրում եմ, որ ՀՀ ֆինանսների նախարարությունը Ընկերությանն ուղղված գրությամբ փաստել է, որ «ՍԱԾ ԳՀԾՁԲ-20/11» ծածկագրով ընթացակարգի շրջանակում գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից «Ար-Մոբիլ» ՓԲԸ-ի՝ «Armeps» համակարգում գրանցած law@armobil.am էլեկտրոնային փոստի հասցեով ոչ ավտոմատ ծանուցման եղանակով 12/12/2019թ. ժամը 17:31-ին ուղարկվել է էլեկտրոնային ուղերձ նամակ, այսինք Պատվիրատուի կողմից պահպանվել է Կարգի 41-րդ հոդվածով սահմանված պահանջը, մինչդեռ Ընկերության այն պնդումները, որ «Մաքսիմիլիան Գրուպ» ՍՊԸ-ն իրականացնում է www.armobil.am սերվերի հոսթինգ ծառայություն, նշված սերվերի վրա են տեղադրված Ընկերության բոլոր մեյլերը, այդ թվում նաև law@armobil.am և info@armobil.am էլեկտրոնային փոստերը, և փաստացիորեն «Մաքսիմիլիան Գրուպ» ՍՊԸ-ի կողմից նշված ժամանակահատվածում սերվերում ծրագրային ապահովման թարմացումներ կատարելու արդյունքում սերվերը անջատված է եղել, որի արդյունքում «ԱՐ-ՄՈԲԻԼ» ՓԲԸ-ի law@armobil.am և info@armobil.am էլեկտրոնային հասցեներին(ից) մուտքեր/ելքեր չեն կատարվել, ապա սույն մասով ահնրաժեշտ եմ համարում արձանագրել, որ նման պնդումն հիմնավոր չէ և չի կարող հիմք հանդիսանալ սույն Ընթացակարգի քննության համար:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ գտնում եմ, որ առկա է Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 26.12.2019թ. թիվ 26/26-1/21514-2019 գրությամբ «ԱՐ-ՄՈԲԻԼ» ՓԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «ԱՐ-ՄՈԲԻԼ» ՓԲԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին

մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**